

ԲԵՒԵՈՒԱԶԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՀԱՅՍՍՏԱՆԻՔ

Շուրջի օրինակած արձանագրու-
թիւնքն զԲէյխտտուրխիւս Բ կը ցուցնեն
որդի Արգիստիսի. բայց Ասուր-ալու-
իտիկի արձանագրութեան նայելով
այս երկու թագաւորութեանց մէջ ու-
րիշ մը պէտք է զննել: Վասն զի Սիւ-
սիսէ-իւրիպի որդին կը պատմէ որ իր
երկրորդ արշաւանքին մէջ, յետ յաղ-
թելու թուովսայ-կիւմեկի կամ կիմ-
մերեանց, յետ աւերելու և հնազան-
դեցնելու զԻսպալ՝ Դիպարեանքը .
զՄաւնաքի՝ Մոսենքեանքը, գարձաւ
վաննայ երկիրը, որուն տիրելով իս-
պաքէ Ասկուզա՝ ապստամբեր էր Ա-
սորեստանցուցմէ . աւերեց երկիրը և
բնակչաց մեծ մասը Ասորեստան տա-
րաւ: Հայաստանի Ըգարեան (Ն.Ք) պատ-
մութեան բոլոր այս դէպքերը կը յայտ-
նեն որ վաննայ տէրը որ Ասորեստա-
նեայց դէմ ալ կը զննէր, Ալարոսեան
հարստութեան իշխան մ'էր: Այս են-
թադրութիւնը ստուգութեան կը փո-
խուի այն անտիպարձանագրութեամբը՝
որոնք գտնուեցան Էրզրումի շրջակայ-
քը, և զորս հաղորդեցին ինծի Հայոց
Բարիգու Մուրատեան վարժարանին
Հարք: Արդ առաջին ըսածնուս գտնա-
լով՝ կայ իսպուրիկիս Բ մ'ալ, որդի Ար-
գիստիսի, որ անշուշտ Բէյխտտուրխիս
անդրանիկ եղբայրն էր և իրմէ առաջ
թագաւորած, իսկ Բէյխտտուրխիս յա-
ջորդած է իր որդին իսպուրիկիս Գ:

Այս Բէյխտտուրխիս վրայ վանայ մէջ
երեք արձանագրութիւնք կան, որոնց-
մէ երկուքը պատմական են. մէկն եր-
կայն և մանրամասն, միւսը շատ կարճ
և երկու պարզ կրօնական քարոզք .
ասկէ զատ վենետիկոյ Միսիթարեանց
հրատարակած թիւ Ե և Մալաթիայի
արձանագրութիւնք: Բէյխտտուրխիս
անունը յիշուած է նաև Ասուր-պակի-
փալի կոնաձև արձանին վրայ. և իր

1 Շարունակութիւն, էջ 132, 199.

անունը հոն գաղափարական նշանա-
գրով դրոշմուած է, բոլորովին ասո-
րեստանցի ձևերով. իսկ պատճառը ար-
դէն վերը Բսի, որ Նինուէական զպիրք
կը ջանային իրենց յատուկ անուանց
նմանցնել օտար ազգաց անուանքն ալ:

Ասուր-պակի-փալի կոնաձևին վը-
րայ պատմուած պատերազմները, Ու-
րարդի երկրին մէջ հանդիպեցան,
բայց այն արձանը կոտորուած ըլլալով
անհնար է որոշ հասկննալ. կ'երեկ թէ
այն ԺԲ յարձակման վրայ է խնդի-
րը որ իր պատերազմաց մէջ վերջինն
է. որով և յետնագոյն քան զԻսպալ
մեծ պատերազմն՝ որ եղաւ յամին 655
Ն.Ք. Այս թուականիս մանսթութեամբն
է որ կրնանք որոշել Բէյխտտուրխիս
թագաւորութեան միջոցը: Բայց այս
կոնաձևը Հայաստանի մէջ քիչ առաջ
ուրիշ պատերազմ մ'ալ կը նշանակէ,
որ Բարեթոնի մէջ հանդիպած Մաւնա-
Մուրիկիս պատամարտութեանէն տարի
մը առաջ կ'իյնայ (663 Ն.Ք): Այս ար-
շաւանքը վաննայ երկրին մէջ եղած է .
այստարհակալին առած քաղաքներուն
մէջ կը յիշուի նաև Ուրմէշաք, որ
արդի Ուրումիսայն կ'երևայ: Վանայ
մէջ պատերազմող և յաղթուող թա-
գաւորը Իքսալի կոչուած է: Ասիկայ
յայտնապէս Ալարոսեան հարստու-
թեան իշխան մ'էր, և այս իշխանը ո-
րուն վրայ արձանագրութիւն մը չու-
նինք, և որուն ճշգրիտ անունը մինչև
սա մեզ հասած չէ, անշուշտ իսպուրի-
կիս Բ՝ և Բէյխտտուրխիս Բ՝ մէջ թա-
գաւորած է. որով իրաւամբ կրնայ եր-
կրորդ որդի կարծուի Արգիստիսի, և
թագաւորած. յետ իրեն երկու եղ-
բայր, կամ որդի իսպուրիկիս, որուն
հօրեգլայրը յաջորդած ըլլայ, որդի չու-
նենալուն պատճառաւ:

Ինչ որ ալ ըլլայ՝ Բէյխտտուրխիս որ
Ն.Ք 655ին ժամանակները կ'իյնայ, եր-

կար թագաւորութիւն մը ունեցաւ, վասն զի ակթուոյն վրայ էր նաև 625ին, յետ կործանման Նինուէի: Ասոր փաստը կը գտնուի Շուլցի ժԲ արձանագրութեան մէջ, ուր թագաւորը կը պատմէ երեք զանազան ժողովրդոց դէմ բրած պատերազմը և իրեն աւարները: Երեք յաղթուած ժողովուրդներն են Բարեխունիք, Երաւիք, և Բատաւ գիրննիք: Ետևի երկու ազգերը շատ դժուար է ճանչնալ, բայց առաջինն յայտնապէս գիւրբեւայի կը ցուցնէ: Արդ Բարեւայիք բնաւ ուղղակի չկուուեցան Հայաստանի տիրող իշխանաց հետ, բայց եթէ յետ անկման Նինուէի, երբոր Նարուպաղասը տիրեց Ասորեստանեայց Միջագետքի մէջ ունեցած երկիրներուն: Պէտք է գիտել որ այս արձանագրութեան վկայութիւնը բոլորովին կը հաւաստէ այն թուականը, զոր ես գրի Բարեւայցոց և Մարաց՝ պաւառները բաժնելու վերայ խօսելուս ատեն, որոնք միացան Ասորեստանեայց ինքնակալութիւնը կործանելու: Իրացընէ Բարեւայիք որպէս զի կարենային Մարաց երկրէն առանց անցնելու՝ Ալարոսեանց հետ պատերազմել, որոնք տիրած էին Արդիստիսի ժամանակ Վաւնույք՝ և անտարակոյս նաև Նախիթի ալ, պէտք էր որ Նարուպաղասը տիրած ըլլար Ասորեստանեայց այն մասին որ Տիգրիսի ափանց աջ կողմը կ'իյնար, մինչդեռ Մարք, ինչպէս ցուցեր եմ, նոյն դեպին ձախ կողմը բռնած էին: Այսու ամենայնիւ, կան գրաւոր վկայութիւններ այն պատերազմաց վրայ, զորոնք Բարելնի յետին ինքնակալութեան թագաւորը՝ Թրին Հայաստանի մէջ: Մեզասթէնի յարգի յօգուած մը, զոր կը յիշատակէ Եւսերի Աբիւղնէսն առնելով, կը նշանակէ Նարու-բուտու-նուարի յաղթական ընթացքը մինչև յիւրբիա կովիասու: « Մեգասթենէս՝ « առէ զՆարուպոգոնոսը քան զՀերաւ, « կէս հզորագոյն լեալ, և 'ը Լիբիա և « յիւրբիա զորաժողով լեալ և ձեր- « բակալ արարեալ զնոսս՝ յաշակոզմն

« Պոնտոսի ընակեցուցանել՝ »: Պատմութիւնը, գերինները տարուած երկիրը, կարծես որ չկովիասային յիւրբիայն կ'ուսկեն նշանակել, թէպէս և բնագիրը յայտնապէս սպանիական իբերիոյ և Լիբիոյ վրայ կը խօսի: Նոյն իմաստը կու տայ նաև Յովսեպոսի առած կտորն ալ. « Չլարուգոգոնոսը, ասէ Մեգաս, « թենէս յերկրորդ գիրս Հնդկայնոց, « արիագոյն լինել քան զՀերակլէս, որ « մեծագոր զորութեամբ զԼիբիա և զի- « բերիա յաղարգ վարէր² »:

Բայց ես՝ այնպէս կարծեմ որ որչայս հատուածին ստոյգ իմաստը՝ բնագրին նախկին ոգւոյն համեմատ, Մովսէսի խորենացւոյն բրած թարգմանութիւնն է: « Մեծագորն Նարուգոգոնոսը բըւ- « նագոյն էր քան զիլակլէս Լիբիա, « ցուց (այսինքն Հերակլէս աշխարհա- « կալ Լիբիոյ). զորաժողով լեալ, հասա- « նէր 'ի վերիացուց աշխարհն » և այլն:

Բայիտաուրիս ալ նոյնպէս Շուլցի, ժԲ արձանագրութեան մէջ, Վաւնուոջ քաղաքը կը յիշատակէ իբրև իրեն ալ թուանիստ սեզերէն մէկը, և իր արքայական շինուածոց վրայ այսպէս կը խօսի. « կառուցի ամարաստանս երես, « Ակուռնուի, Մաւնու: Կուռնուգու. կա- « ռուցի քաղաքս քսան և երես պարս- « պապատս, կազմեցի զբեղիկ ապա- « ռանից ամրոցին (յարիխար, ուսկից « առաջ եկած է խորխու անունը՝ որ կը « տրուի մինչև ցայսօր Վանոյ վրայ նա- « յող ժայլին և անոր վրայ եղած ամ- « բոցին), տիրեցի քաղաքաց, տիրեցի « դաւառաց, իշխեցի արանց և կա- « նանց »:

Իսպուրիսիս Գ յամրոցեց հօրը Բէլիտաուրիսիս: Անոր վրայ պատմա-

1 Μεγασθένης δὲ φησὶ Ναβουχοδρόσορον Ἑρακλῆος ἀλιμώτερον γεγυότα ἐπὶ τὴ Διβύτης καὶ Ἰβηρίῳν στρατεύσασαι. ταύτας δὲ χειρωσάμενον ἀποδασμόν αὐτέων εἰς τὰ δεξιὰ τοῦ Πόντου κατοικίσει.

2 Τὸν Ναβουχοδονόσωρ ὁ Μεγασθένης ἐν τῇ δευτέρᾳ τῶν Ἰνδικῶν Ἑρακλέους ἀλιμώτερον ἀποφαίνει, ὅς ἀνδρῖα μεγάλη Διβύτης τὸ πλεῖστον καὶ Ἰβηρίας κατεστρέψατα.

կան յիշատակագիր մը ունինք, որ առաջինն է Բալուի արձանագրութեանց մէջ, և զոր սխալմամբ լայարտ արձանագրութեան մը առաջին մաս կը համարի, ասոր մէջ շատ մը տիրած երկիրներու և քաղաքներու անուններ կան՝ վանայ քով այս թագաւորիս միակ արձանագրութիւն մը յայտնի կերպով կը ցուցնէ որ թագաւորութեան վերջերը իրեն օգնական ըրած էր իր Մէկնուս Բ որդին։ Մհեր-Քաբուսի ժայռերուն վրայ հետաքննական ծիսարան մը արձանագրուած է, այս երկու թագաւորաց հրամանով, ուր նշանակուած են շատ աստուածներու նուէրները՝ սկեալ Քասլոսիսէն և իր երկու աթոռակիրցներէն, որոնք ըստ այս բնագրին զանազան զոհեր պիտի ընդունին, այլ և այլ անուամբք։ Չոհելոյն յարգը կամ նուաստութիւնն իւրաքանչիւրին աստուածոց պատիւը կը ցըցունէ երկնային դասակարգութեան մէջ, սկեալ Քասլոսիսէն, որ իրաւունք ունի իր բարձրագոյն վիճակին մէջ 70 կովի և 34 ոչխարի, մինչև յետին աստուածութիւնքը, որոնց մէկ ոչխար մը միայն կը զոհուի։ Այս ծիսարանը Ալարօտեանց ազգային աստուածներուն հետ կը յիշատակէ նաև քանի մը օտար աստուածներ, որոնց պաշտօնն այն երկրին մէջ ալ մտած էր. անոնք յետնագրունից մէջ դասուած են, և օմանք հազիւ կէս կովու զոհ կ'ընդունին։

Մէկնուս իր հօրը մահուաբնէն ետքը միայնակ թագաւորեց. և կ'երևայ թէ երկար և յաճող թագաւորութիւն մը ունեցաւ, վասն զի Ալարօտեան թագաւորաց մէջ ամենէն շատ ինքն արձանագրութիւններ թողած է, ինչպէս կը տեսնենք նաև վենետիկ Միսիթարեան Հարց հրատարակածներուն մէջ ալ։ Սակայն ասոնք գրեթէ բոլորն ալ կրօնական արձանագրութիւններ են՝ ի պատիւ երբեմն միայն Քասլոսիսի, երբեմն իր երկու ընկերներուն ալ։ Միայն մէկ հատ մը կայ որ պատմական կերպարան մ'ունի, և այս է Շուլցին լծհատուածն, որուն մէջ Մէկնուսայ

նուաճած քաղաքներու և երկիրներու շարք մը կայ. հօն քանի մը նոր առուանց հետ կը տեսնենք նաև զանոնք ալ որոնք Արգիտալիսի և Բեյիտառաքիսի արձանագրութեանց մէջ կը գրուուին։ Արգ այս արձանագրութիւնը կ'իմացնէ որ Մէկնուս պատերազմող և աշխարհակալ իշխան մը եղեր է, և կանգուն պահեր է իր ինքնակալութեան զինուորական համաւել։

Մէկնուս Բ որ կը թագաւորէր Զգարուն սկիզբները (Ն.Ք), և որով կը զազրին մինչև հիմայ ծանօթ եղած տեղացի արձանագրութիւնք, անշուշտ Ալարօտեան ինքնակալութեան վերջին թագաւորներէն մէկն եղած էր. վասն զի քիչ վերջը՝ յեղակոտութեան մը մէջ, զոր հաստատելը զիւրին է, թէպէտ պարագայքն անձանօթ, իշխանութիւնը Ալարօտեանց ձեռքէն ելաւ, և նոր եկող ցեղի մը ձեռքն ընկաւ, որոնք էին բուն Հայ ըստածներն, և որոնց առաջին փայլը տուաւ Տիգրան Ա. ժամա, նակակից Աժգահակայ և Կիւրոսի։

Արգ, ինչպէս որ վերն ըսի, այս ժամանակակից և ստոյգ արձանագրութիւններէն հանուած պատմութիւնն՝ որ անժխտելի դրական ստուգութիւն մը կը ցուցնէ, աննման է ամենեւին հայկական ըսուած աւանդութեան, որ ուրիշ բան չէ բայց եթէ շարք մը առասպելեալ և պաճուճեալ թագաւորաց անուններու, ստեղծեալ ՚ի Մար-Աբաս կատինայէ, այնպէս որ կտեսիայ պատմական դրութեան յարմար գայ, ուսկից առեր է խորենացին, ինչպէս ինքն ալ յայտնապէս կը խոստովանի, իբրև թանկագին հաստակտիր մը եղեսական դպրոցի հեղինակին։ Այս երկու աղբիւրներուն մէջ տատանին անկարելի է. պատմութիւնը պէտք է մէկդի թողու Մովսիսի խորենացոյն մեղի պահած թագաւորներուն շարքը։ Պէտք է դիտել նաև որ այս շարքը երկու մաս կը բաժնուի. նախ 45 թագաւորաց կարգ մը կայ, որոնք կը համապատասխանեն մի առ մի կտեսիայ ա.

տրեստանեայց կարծեցեալ թագաւորաց շարքին . յիտոյ ուրիշ շարք մ'ալ երկու ցեղ առաջ քան զՏիգրան Ա, և կը սկսի երկրորդ Հայկակէ մը, որ Հայկ կամ բուն Հայ ըսուած ցեղին դիւցազնական անձնաւորութիւն մ'է : Ասով յայտնի կը տեսնուի որ Մովսէս խորենացի, կամ թերևս Մար-Աբաս կատինա, կոտեսիայ իշխանաց թուոյն յարմարցընելու համար, ետևէ ետև երկու զանազան շարք զրբեր է իշխանաց, առաջինը մտացածին, երկրորդը ըստ ճշմարիտ աղգային աւանդութեան : Այս յետոյն մէջ, ճշմարիտ պատմական անունն է Տիգրան . վասն զի այս շարքին գլուխ Հայկակն՝ ժողովրդեան անձնաւորութիւնն է, և ետևի եկող Երուանդն՝ պարզ աշխարհագրական անուն մ'է, ծանօթ մինչև ցայսօր Հայաստանի մէջ վերին Երասխայ կողմերը, և կարծես կը յայտնէ որ բուն Հայ ըսուածներն Արարատայ մտերը նախ այս մասը գրաւեցին : Արդ շարքին մէկ մասն զոր ես աղգային իրական աւանդութեան վրայ յեցեալ կը համարիմ, կը հաստատէ այն հետևութիւնը, զոր ես բնիկ բեւեռաձևներէն և դիպաց համաձայնութիւններէն հանեցի՝ այս նամակիս մէջ . այսինքն որ վերջին ատենները Հայք փոխանակեցին Ալարօտեան թագաւորութեան տեղ և թէ այս Տիգրանայ ժամանակները :

Բայց որչափ որ ալ մտացածին կամ պաճուճեալ ըսինք թագաւորական տնուանց առաջին կարգը, զոր խորենացին Մար-Աբասէն առեր է, արդեօք ամբողջն ալ շինծո՞ւ համարելու է, արդեօք ժողովրդեան յիշողութեան մէջ մնացած քանի մը աւանդութեան մէջ ալ չէ մտուցած անոր մէջ, յարմարցընելով զանոնք ըստ իւր երևակայութեան և դրութեան : Այս յետին են թագրութիւնը շատ հաւանական կերևոյ ինծի, վասն զի բոլոր հնութեան մեզի աւանդած ստեղծարանութիւնք քիչ անգամ բոլորովին սուտ են, և ընդ հանրապէս հեղինակք իրենց գիտին աւելի յարգ մը տալու համար,

միշտ ջանայր են ամենուն ծանօթ աւանդութիւններ ալ մէջը խառնել : Եթէ այս այսպէս է, հաւանականաբար երկու աղբիւր կրնանք դնել ուսկից Մար-Աբաս կատինա քաղեր է իր գործածած թուականներուն մաս մը, խառնելով զանոնք իր մասց ստեղծաներուն հետ : Առաջինն բուն Հայ կոչուածներուն իրենց նախկին ցեղին աւանդութիւնն է, որ հնագոյն է քան զիրենց փոխադրուիլն ՚ի Հայաստան, մինչդեռ կ'ապրէին իրենց եղբարց փոխադարձութիւնը : Բայց թէ արդեօք որո՞նք այս աղբիւրէն են, վկայութիւններ չունենալնու համար՝ չենք կրնար ճանչնալ : Երկրորդ մասն ալ Ալարօտեանց ժամանակի յիշատակութիւնք են, որոնք անշուշտ պահուեցան Հայոց գալէն վերջն ալ հին ժողովրդեան մէկ մասին՝ նորին հետ խառնուելով : Այսպիսիներէն մէկ քանին կարծես թէ կը գտնամ Մովսիսի խորենացոյն Մար-Աբասէն աւած կտորներուն մէջ ալ :

Ըսինք վերը Ներքովիս կոթողին վրայ գրուածներուն մէջ, որ Ասորեստանեայց հետ կուռող Ալարօտեանց առաջին թագաւորն Արամ կը կոչուէր, որ յաղթեց անոնց բանակին, որոնց կը զօրավարէր Բարշաւ դիւցազն (Մով. խոր. Ա. Ժգ) . այս նմանողութիւնն մեծ է և ոչ բոլորովին յանկարծադէպ : Միայն, ինչպէս յաճախ կը հանդիպի այն դիպուածոց զորոնք ժողովուրդն առանց գրելու բերանացի աւանդութեամբ կը պահէ յիշողութեանը մէջ, այս թ գաղուն (Ն. Բ), ստոյգ պատմական պատերազմն, իրպատմական ձև մը առեր է Մար-Աբաս կատինայի և Մովսիսի խորենացոյ մէջ, և կարգէ զուրս հին ժամանակի մը փոխադրուած :

Կայ ուրիշ յարմարողութիւն մ'ալ, զոր արդէն ըսեր եմ և ինծի հետևած է Պ. Օրբէրդ ալ, Մարտիքիի արձանագրութեանց Ուրաս կամ Ուրասա աւանան՝ հայ պատմագրէն յիշեալ Հրաւելայ ածուան հետ ունեցած նմանողու-

թիւնն է. և շատ մեծ է այս յարմարու-
 թիւնը. որովհետև Հրաչեայ այն ժա-
 մանակին գրուած է՝ յորում կը թա-
 գաւորէր Ուրաւ: Այս երկու անուանց
 նշխութիւնը այս պարագայովս ալ կը
 հաւաստուի, որ աւանդութիւնն Հրա-
 չեայի ժամանակ կը դնէ Հրէից գերի-
 ներուն ՚ի Հայաստան բերուիլը, ուս-
 կից յետոյ առաջ եկած կը համարուին
 Բագրատունիք: Ստոյգ է որ Մովսէս
 Խորենացին այս գերինները նաբուգո-
 դոնոսորէն բերուած կը համարի, բայց
 ասիկայ երկու գերութեանց Սամու-
 րիայի և Երուսաղէմի, իրարու հետ չփո-
 թուելէն առաջ եկած է, զոր ուղղելու
 համար բաւական են պատմութեան
 թուականքն: Հայաստան փոխազրուող
 Հրէայք, որոնց վրայ կը գտնուին յիշա-
 տակութիւն, Գաղատաղու և Նեփթա-
 զիմայ ցեղին մարդիկն էին, զորոնք
 731ին թագադրադասար Բ Դամասկո-
 սի թագաւորութեան Ասորւոց հետ
 գերի տարաւ, որոնք կտոր մը ժամա-
 նակ Ասորեստան կենալէն ետքը, յետոյ
 կիյր դետոյն երկիրներուն վրայ հաս-
 տատուեցան (Թագ. Բ. ԺԶ. 9). և Ի-
 բաւընէ հովկասու մօտակայ գաւա-
 ճաց Հրեայք միշտ իրենք զիրենք Հրէից
 Տանն ցեղէն իշած կը համարին, և Ի-
 բանց արտորանաջ թուականը մինչև Իս-
 րայէլի թագաւորութեան անկումը կը
 տանին: Թագադրադասարի՝ Դամաս-
 կոսի և Իսրայէլի թագաւորութեան հետ
 ըրած պատերազմունքը յետնագոյն ըւ-
 լալով քան զՀայոց հետ ունեցած կը-
 ուիւնները, անշուշտ քիչ տարի վերջը
 Սաղոնացիի Ռարայի հետ կուռելու
 ժամանակ, Ասորեստանեայք այս գե-
 րինները իբրև դալովական մը տարին
 կիյր գետոյն եզերքները: Ասով Բա-
 գրատունեաց նախահօր Շամբովայ
 վրայ եղած աւանդութիւնք, և Հրեայ
 դերիններն՝ մեծ հաստատութիւն մը
 կու տան Հրաչեայի և Ռւրայի նոյն ըւ-
 լալուն:

Թերևս Սկայորդիս ալ Արգիստիս
 անունն ըլլայ, թէ որ Սկայորդին Հրա-
 չեայէն երկու ազգ վեր գրուած չըլ-

լար: Իրաւ է որ ստոյգ պատմական
 անուններէն ոմանք, որոնց վրայ կա-
 ռևոր աւանդութիւնք կային, թերևս
 Մար-Ուրաս կատինա ժողովեր է իր
 շարքին մէջ, և թէ անոնց տուած կար-
 դին մեծ արժէք մը պէտք չէ տալ:
 Հայկական աւանդութիւնն Սկայոր-
 դոյն ժամանակ կը դնէ Սենեքերիմայ
 հայրասպան որդւոց Հայաստան փախ-
 յիլը:

« Ութսուն ամօք աւելի կամ պա-
 կաս, յառաջ քան զթագաւորութիւն
 Նաբուգոդոնոսորի էր և Սենեքերիմ
 կացեալ արքայ Ասորեստանի, որ զԵ-
 րուսաղէմ պաշարեաց առ Եղեկիպիւ
 Հրէից առաջնորդաւ. զոր սպանեալ
 որդւոց նորա Աղգամելայ և Սանասա-
 րայ, եկին փախստական առ մեզ: Յո-
 րոց զմին յարևմտից հարաւոյ թա-
 խարհիս մերոյ, մերձ ՚ի սահմանս նո-
 րին Ասորեստանի, բնակեցուցանէ Սկա-
 յորդին մեր քաջ նախնին, այսինքն
 զՍանասարն. և ՚ի սմանէ սերեալ լցին
 զՍիմն ասացեալ լեռան: Իսկ պերճքն
 և զՍաւաւորքն ՚ի նոցանէ յետոյ ուրեմն
 մտերմութիւն վաստակոց առ թագա-
 ւորսն մեր ցուցեալ, բղբխութիւն կող-
 մանցն արժանաւորեցան առնուլ: Իսկ
 Արգամոզանն յարևելից հարաւոյ նո-
 րին կողմանն բնակեալ, ՚ի սմանէ ասէ
 պատմագիրն լինել զԱրժրունիս և ըզ-
 Գնունիս »: Այս ալ գիտնալու է որ
 Սամուէլ Սենեգին Պարոյրի թագաւո-
 րութեան ժամանակ կը դնէ այս գէպքը:

Սենեքերիմայ (Սիւն-ախւ-Իրիպ) իր
 որդւոցմէ սպաննուիլը պատմական ըս-
 տոյգ գէպք մ'է որուն կը վկայեն Բե-
 րոսոսի՝ հատուկտիրք և Ս. Գիլքն. ա-
 նոնց Հայաստան փախչին հաստատեալ
 է նոյն գրքերով: Արդ այս գէպքն այն
 տտեն պատահեցաւ երբ անտարակոյս
 Արգիստիս կը թագաւորէր Ալարո-
 տեանց վրայ: Ասկէ կրնանք հետևյալն
 որ Արգիստիս նոյն է ընդ Սկայորդոյն
 Մովսիսի Խորենացոյ:

Գաւառի Ի Յ. ԱՐՄՈՐՄԱՆԷ